ԹՐԱՆՍՓԱՐԵՆՍԻ ԻՆԹԵՐՆԵՇՆԼ
հակակոռուպցիոն կենտրոն

ԹԻՀԿ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՊԼԱՆ 2013-2015 թթ.

(2011-2015 թթ. Ռազմավարության վերամշակված տարբերակ)

Հաստատվել է Ընդհանուր ժողովի կողմից

“24“ փետրվարի, 2014 թ.

Արձանագրություն թիվ 14/01

Բովանդակություն

ՆԱԽԱԲԱՆ 3
ՌԱՁՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐ և ԽՆԴԻՐՆԵՐ 4
ՌԱՁՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԻՐԱԳՈՐԾՈՒՄ 12

ՆԱԽԱԲԱՆ

Սույն Ռազմավարական պլանը վերամշակվել է՝ հիմք ընդունելով 2012 թ. Կազմակերպության կողմից իրականացված ռազմավարական պլանավորման արդյունքները, որի ընթացքում խնդիր էր դրվել գործող 2011-2015 թթ. Ռազմավարությունը /*հաստատված Ընդհանուր Ժողովի կողմից 25.02.2011թ. թիվ 01 արձանագրությամբ*/ համապատասխանեցնել Կազմակերպության կողմից իրականացվող գործունեությանը՝ ըստ առանցքային ոլորտների/ուղղությունների:

Կազմակերպության 2013-2015 թթ. ռազմավարական պլանի հիմքում դրված են հետյալ երեք ուղղությունները՝

- *Արդյունավետ հակակոռուպցիոն քաղաքականություն, թափանցիկ ու հաշվետու կառավարում*
- *Ազատ, արդար ու թափանցիկ ընտրությունների անցկացում և ընտրական ինստիտուտի կայացում*
- *Հանրային ռեսուրսների, այդ թվում՝ պետական և համայնքային սեփականության ու ֆինանսական միջոցների ողջամիտ, թափանցիկ և հաշվետու կառավարում*

Սույն Ռազմավարական պլանը ուրվագծում է Կազմակերպության առաջիկա 3 տարիների գործունեության շրջանակը երեք առանցքային ոլորտներում (կառավարման համակարգ, ընտրություններ, հանրային ռեսուրսներ)՝ սահմանելով ցուցանիշներ Կազմակերպության առջև դրված ռազմավարական խնդիրների համար:

Այն հանդիսանում է՝

- արդյունավետ վերահսկման գործիք Կազմակերպության անդամների;
- ուղենիշային փաստաթուղթ աշխատակիցների համար;
- տեղեկատվության աղբյուր է շահագրգիռ հանրության ու դրամաշնորհատու կազմակերպությունների համար:

Սույն ռազմավարական պլանը հիմք է հանդիսանում կազմակերպության գործողությունների ու աշխատանքային պլանների մշակման ու իրականացման համար:

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐ և ԽՆԴԻՐՆԵՐ

ՌՆ 1. 1. Բարելավվել են լավ կառավարմանն առնչվող օրենսդրությունը և իրավակիրառ պրակտիկան				
ՌԽ 1.1.1 Բարելավվել է հակակոռուպցիոն քաղաքականությունը և դրա իրականացման պրակտիկան	**Ցուցանիշներ**	**2013**	**2014**	**2015**
Օրինավորության ազգային համակարգի հենասյուն հանդիսացող կառույցների գործունեությունը կարգավորող օրենսդրության և պրակտիկայի ուսումնասիրություն և դրանց բարելավմանն ուղղված ջատագովություն	• Ուսումնասիրվել է 13 հենասյուների գործունեությունը կարգավորող ողջ օրենսդրությունը, դրա կիրարկումը և համապատասխանությունը միմյանց և միջազգային պրակտիկային • Մշակվել է ամփոփ հաշվետվություն և համապատասխան մարմիններին ուղղված առաջարկությունների փաթեթ • Տպագրվել է հաշվետվության 240 օրինակ և տարածվել առնվազն 20 շահագրգիռ կառույցների շրջանում • Կազմակերպվել է շահագրգիռ կողմերի քննարկում՝ ներկայացնելու առաջարկությունները			
Հակակոռուպցիոն ռազմավարության ընդհանուր իրականացման կամ դրա առանձին ոլորտներում նախատեսված միջոցառումների կատարման մոնիտորինգ ու գնահատում և դրանց բարելավմանն ուղղված ջատագովություն[1]	• Ուսումնասիրվել է հակակոռուպցիոն ռազմավարությամբ նախատեսված միջոցառումների իրականացման ընթացքը • Կազմվել է ամփոփ հաշվետվություն և համապատասխան մարմիններին ուղղված առաջարկությունների փաթեթ • Տպագրվել է հաշվետվության 100 օրինակ և տարածվել առնվազն 20 շահագրգիռ կառույցների շրջանում			
Առանձին ոլորտներում կոռուպցիայի պատճառների, դրսևորումների, տարածվածության, ընկալումների և դրա դեմ պայքարի ձևերի և գործիքների ուսումնասիրություն, կոռուպցիոն ռիսկերի նվազեցման առաջարկությունների մշակում և դրանց ջատագովություն	• Առնվազն 2 ոլորտում իրականացվել է հետազոտություն: • Կազմվել է ամփոփ հաշվետվություն և համապատասխան մարմիններին ուղղված առաջարկությունների փաթեթ • Տպագրվել է հաշվետվության 50 օրինակ և տարածվել առնվազն շահագրգիռ կառույցների շրջանում • Կազմակերպվել է շահագրգիռ կողմերի քննարկում՝ ներկայացնելու առաջարկությունները			

[1] Հակակոռուպցիոն տեսանկյունից առանձնապես կարևորվող ոլորտների մոնիտորինգին և գնահատման դեպքում դրանք կարող են առանձնացվել և դիտարկվել որպես առանձին ռազմավարական խնդիր՝ համապատասխան գործողությունների պլանով՝ ինչպես օրինակ՝ 1.1.4, 1.1.5 խնդիրները

ՌԽ 1.1.2. Կատարվել են ՀՀ կողմից ստանձնված միջազգային հակակոռուպցիոն պարտավորությունները	Ցուցանիշներ	2013	2014	2015
ՀՀ կողմից ստորագրված՝ լավ կառավարմանը կամ կոռուպցիայի դեմ պայքարին առնչվող միջազգային փաստաթղթերի համապատասխան դրույթների կատարման մոնիտորինգ ու գնահատում և դրանց բարելավմանն ուղղված ջատագովություն	• Իրականացվել է միջազգային համաձայնագրերի և կառույցների (UNCAC, GRECO, OECD, ENP, EaP, OGP) շրջանակներում ՀՀ ստանձնած պարտավորությունների կատարման պարբերական մոնիտորինգ՝ • Կազմվել է ամփոփ հաշվետվություն և ներկայացվել միջազգային փաստաթղթերի պատասխանատու մարմիններին և ՀՀ համապատասխան պետական կառույցներին			

ՌԽ 1.1.3. Բարելավվել է կոռուպցիոն դեպքերին առնչվող իրավակիրառ պրակտիկան	Ցուցանիշներ	2013	2014	2015
Տեսչական մարմինների գործունեությունը կարգավորող օրենսդրության ուսումնասիրություն և դրանց բարելավմանն ուղղված ջատագովություն	• Իրականացվել է առնվազն 4 տեսչական մարմինների (աշխատանքի, հարկային, քաղաքաշինական և բնապահպանական տեսչությունների) գործունեությունը կարգավորող իրավական ակտերի և դրանց կիրարկման պրակտիկայի ոսումնասիրություն • Կազմվել է ամփոփ հաշվետվություն և համապատասխան մարմիններին ուղղված առաջարկությունների փաթեթ • Կազմակերպվել է շահագրգիռ կողմերի 4 քննարկում՝ ներկայացնելու ուսումնասիրության արդյունքներն ու համապատասխան առաջարկությունները			
Իրավապահ մարմինների գործունեության մոնիտորինգ և գնահատում և դրա բարելավմանն ուղղված ջատագովություն	• Առնվազն 36 գործերի առնչությամբ իրականացվել է իրավապահ մարմինների (գլխավոր դատախազություն, հատուկ քննչական ծառայություն, ոստիկանություն) կողմից ձեռնարկվող քայլերի ուսումնասիրություն • Առնվազն 3 դեպքերում քրեական գործ հարուցելը մերժելու կամ այլ անգործություն դրսևորելու առնչությամբ իրավապահ մարմինների գործողությունը բողոքարկվել է դատական կարգով • Կազմվել է ամփոփ հաշվետվություն և համապատասխան մարմիններին ուղղված առաջարկությունների փաթեթ • Կազմակերպվել է շահագրգիռ կողմերի քննարկում՝ ներկայացնելու ուսումնասիրության արդյունքներն ու համապատասխան առաջարկությունները • Տեսամիջոցների օգնությամբ ամփոփվել և ներկայացվել են կոռուպցիոն հանցագործությունների և դրանց առնչությամբ ձեռնարկած միջոցառումների վերլուծությունը/դինամիկան 2009թ.-ից ի վեր: • Կազմվել և տարածվել են հայտարարություններ իրավապահ մարմինների գործունեության վերաբերյալ՝ առանձին գործերով կամ ընդհանուր առմամբ			

ՌԽ1.1.4. Բարելավվել է տեղեկատվության ազատության օրենսդրությունը և դրա կիրարկումը	Ցուցանիշներ	2013	2014	2015
Տեղեկատվության ազատությունը կարգավորող օրենսդրության ուսումնասիրություն, դրա կիրարկման մոնիտորինգ և գնահատում և բարելավմանն ուղղված ջատագովություն	• Կազմվել է առաջարկությունների փաթեթ տեղեկատվության ազատությունը կարգավորող օրենսդրության («Տեղեկատվության ազատության մասին» օրենք և այլ օրենքներ պարունակում են տեղեկատվության ազատության նորմեր) բարելավման ուղղությամբ՝ հիմք ընդունելով նախկինում կատարված ուսումնասիրության տվյալներն ու ռազմավարական դատավարության գործերով արդյունքները • Կազմակերպվել է շահագրգիռ կողմերի քննարկում՝ ներկայացնելու ուսումնասիրության արդյունքներն ու համապատասխան առաջարկությունները			
Տեղեկատվության ազատության սահմանափակումների դեպքերով ռազմավարական դատավարության իրականացում	• Առնվազն չորս գործերով իրականացվել է ռազմավարական դատավարություն			

ՌԽ1.1.5. Բարելավվել է հանրային ծառայությունը կարգավորող օրենսդրությունը և դրա կիրարկումը	Ցուցանիշներ	2013	2014	2015
Բարձրաստիճան պաշտոնատար անձանց գործունեությունը կարգավորող՝ հանրային ծառայության օրենսդրության ուսումնասիրություն, դրա կիրարկման մոնիտորինգ և գնահատում և բարելավմանն ուղղված ջատագովություն	• Իրականացվել է հանրային ծառայությունը կարգավորող օրենսդրության ուսումնասիրություն • Կազմվել է ամփոփ հաշվետվություն և համապատասխան մարմիններին ուղղված առաջարկությունների փաթեթ • Կազմակերպվել է շահագրգիռ կողմերի քննարկում՝ ներկայացնելու ուսումնասիրության արդյունքներն ու համապատասխան առաջարկությունները, մասնավորապես՝ վարքագծի կանոնների, շահերի բախման, գույքի և եկամուտների հայտարարագրերի առնչությամբ • Վերլուծվել և կազմակերպության կայքի շտեմարանում տարեկան պարբերականությամբ տեղադրվել են առնվազն 200 պաշտոնատար և նրանց փոխկապակցված անձանց հայտարարագրերի տվյալները • Առնվազն երեսուն գործերով իրականացվել է համապատասխան էթիկայի հանձնաժողովների (ԱԺ Էթիկայի հանձնաժողով, Բարձրաստիճան անձանց էթիկայի հանձնաժողով, դատավորների և դատախազների էթիկայի հանձնաժողով) կողմից ձեռնարկված միջոցառումների ուսումնասիրություն • Առնվազն տասներկու գործերով բարձրաստիճան պաշտոնյաների ապօրինի գործունեության վերաբերյալ ներկայացվել է հաղորդում իրավապահ մարմիններին			

ՌՆ 1.2. Ակտիվացել է հասարակության մասնակցությունը կոռուպցիայի դեմ պայքարում				
ՌԽ 1.2.1. Աճել է կոռուպցիայի վերաբերյալ իրազեկությունը և դրա նկատմամբ անհանդուրժողականությունը	**Ցուցանիշներ**	**2013**	**2014**	**2015**
ԹԻ գլոբալ շարժման նախաձեռնությունների և քարտուղարության կողմից հրապարակվող պարբերական ուսումնասիրությունների ներկայացում Հայաստանում	• Կազմակերպվել է առնվազն հինգ մամուլի ասուլիս Կոռուպցիայի ընկալման համաթվի և Կոռուպցիայի համաշխարհային բարոմետրի ներկայացման համար • Մշակվել ու տարածվել է առնվազն հինգ մամուլի հաղորդագրություն			
Կոռուպցիոն երևույթների լուսաբանում, խնդիրների բարձրաձայնում և գիտելիքների տարածում	• Տրվել է կոռուպցիոն երևույթների վերաբերյալ շուրջ 40 հարցազրույց լրատվամիջոցներին • Հրապարակվել են շուրջ վեց հայտարարություններ/պաշտոնական դիրքորոշումը կոռուպցիոն դրսևորումներին առնչվող և այլ իրավունքներ ոտնահարող գործերի վերաբերյալ • Ներկայացվել են շուրջ վեց դասախոսություններ կոռուպցիայի, դրա դրսևորումների, տարածվածության, ընկալումների, դրա դեմ պայքարի և այլ առնչվող հարցերի վերաբերյալ			
Հանրային քարոզարշավների կազմակերպում և հակակոռուպցիոն գաղափարների տարածում	• Կազմակերպվել է առնվազն 6 քարոզարշավ կոռուպցիայի, ընտրությունների, հանրային ունեցվածքի, տեղեկատվության ազատության և այլ հարցերի վերաբերյալ՝ ներառելով հանրային միջոցառումներ և/կամ մեդիանյութեր • Youtube-ում և սոցկայքերում տեղադրված քարոզչանյութերը ստացել են 1000 like, 200 share, հիսուն comment, հանրային միջոցառումներին մասնակցել է մոտ 100 հոգի • Ֆեյսբուքյան էջի լայքերի քանակը աճել է 500-ով: • Կայքի այցելուների թիվը աճել է 10 հազարով:			
ՌԽ 1.2.2. Քաղաքացիները և կազմակերպությունները ձեռք են բերել կարողություններ մասնակցելու կոռուպցիայի դեմ պայքարում	**Ցուցանիշներ**	**2013**	**2014**	**2015**
Իրավաբանական աջակցության տրամադրում կոռուպցիայից տուժած և կոռուպցիոն հնարավոր դրսևորումների մասին հայտնող քաղաքացիներին ու կազմակերպություններին	• Ռազմավարական նշանակություն ունեցող 6 գործերով իրավաբանական աջակցություն (խորհրդատվություն, դիմումների ներկայացում առնչվող պետական կառույցներին, շահերի ներկայացում դատական մարմիններում) քաղաքացիներին և կազմակերպություններին • Հավաքների և արտահայտման ազատության ոտնահարման դեպքերից տուժած քաղաքացիներին իրավաբանական աջակցություն՝ ըստ անհրաժեշտության			
Համատեղ նախաձեռնությունների իրականացում այն կազմակերպությունների հետ, որոնք պայքար են ծավալում կոռուպցիոն դրսևորումների և դրանց հետևանքների դեմ իրենց համապատասխան ոլորտներում	• Գործընկեր կազմակերպությունների հետ համատեղ հրապարակվել է շուրջ 6 հայտարարարություն կոռուպցիոն դրսևորումներ պարունակող տարբեր խնդիրների վերաբերյալ • Կազմակերպությունը մասնակցել է կոռուպցիոն դրսևորումներին առնչվող շուրջ 6 տարբեր խնդիրների վերաբերյալ հավաքների			

ՌՆ 2. 1. Բարելավվել են ընտրական օրենսդրությունը և իրավակիրառ պրակտիկան				
ՌԽ 2.1.1. Բարելավվել են ընտրական օրենսդրությունը և դրա կիրարկումը	**Ցուցանիշներ**	**2013**	**2014**	**2015**
Ընտրությունների ոլորտը կարգավորող օրենսդրության ուսումնասիրություն և դրա բարելավմանն ուղղված ջատագովություն	• Իրականացվել է ՀՀ Ընտրական օրենսգրքի և Կենտրոնական ընտրական հանձնաժողովի որոշումների ուսումնասիրություն • Կազմվել է առաջարկությունների փաթեթ ընտրական օրենսդրության բարելավման ուղղությամբ • Կազմվել է համապատասխան մարմիններին ուղղված առաջարկությունների փաթեթ, մասնավորապես՝ ազատ կամարտահայտման, վարչական ռեսուրսի օգտագործման, ընտրացուցակների, կուսակցությունների ֆինանսավորման, քվեարկության ընթացակարգի, բողոքարկման համակարգի, ինչպես նաև՝ համապատասխան վարչական և քրեական պատասխանատվությունների առնչությամբ • Կազմակերպվել կամ մասնակցել են հանդիպումներ շահագրգիռ կողմերի հետ՝ ներկայացնելու առաջարկությունները			
Օրենսդրության կիրարկման մոնիտորինգ և գնահատում, այդ թվում՝ դիտորդական առաքելություն իրականացնելու միջոցով	• Իրականացվել է վարչական ռեսուրսի օգտագործման պրակտիկայի ուսումնասիրություն • Իրականացվել է նախընտրական քարոզչության պրակտիկայի ուսումնասիրություն • Իրականացվել է դիտորդական առաքելություն առնվազն 70 ընտրատեղամաս Երևան քաղաքում ընտրությունների ժամանակ և երեսուն համայնքներում այլ տեղական մակարդակի ընտրությունների ժամանակ • Առնվազն հարյուր տեղամասի գործողությունները բողոքարկվել են • Ներկայացվել են առնվազն տասներկու հաղորդումներ/ դիմումներ իրավապահ և դատական մարմիններին ընտրախախտումների առնչությամբ քայլեր ձեռնարկելու նպատակով • Կազմվել է հաշվետվություն օրենսդրության կիրարկման վերաբերյալ և ներկայացվել շահագրգիռ կողմերին			

ՌՆ 2. 2. Ակտիվացել է հասարակության մասնակցությունը ընտրական գործընթացներում				
ՌԽ 2.2.1. Ակտիվացել է հասարակության մասնակցությունը ընտրական գործընթացներում	**Ցուցանիշներ**	**2013**	**2014**	**2015**
Կուսակցությունների ծրագրերի և դրանց կատարողականի վերաբերյալ քննարկումների կազմակերպում	• Ուսումնասիրվել է կուսակցությունների կողմից իրենց նախընտրական խոստումների իրականացման մակարդակը • Տպագրվել է հաշվետվության 100 օրինակ և տարածվել առնվազն 100 շահագրգիռ կառույցների շրջանում • Կազմակերպվել է շահագրգիռ կողմերի քննարկում՝ ներկայացնելու կուսակցությունների կատարողականը			
Ընտրախախտումների վերաբերյալ հասարակության իրազեկության բարձրացում	• Կազմակերպվել են դիտորդության դասընթացներ առնվազն հարյուր հիսուն դիտորդի համար • Մշակվել է գրքույկ ՏԻՄ ընտրությունների անցկացման վերաբերյալ և տարածվել առնվազն երկու հազար քաղաքացիների շրջանում			

ՌՆ 3. 1. Բարելավվել են հանրային ռեսուրսների կառավարման օրենսդրությունը և իրավակիրառ պրակտիկան				
ՌԽ 3.1.1. Բարելավվել են բնական ռեսուրսների կառավարման գործընթացները	**Ցուցանիշներ**	**2013**	**2014**	**2015**
Ընդերքի կառավարումը կարգավորող օրենսդրության և պրակտիկայի ուսումնասիրություն և դրանց բարելավմանն ուղղված առաջարկությունների մշակում և ջատագովություն	• Ուսումնասիրվել է ընդերքի կառավարումը կարգավորող օրենսդրությունը և կազմվել է առաջարկությունների փաթեթ • Կազմակերպվել է շահագրգիռ կողմերի քննարկում՝ ներկայացնելու ուսումնասիրության արդյունքներն ու համապատասխան առաջարկությունները			
Հայաստանի՝ Արդյունահանվող արտադրությունների թափանցիկության նախաձեռնության անդամակցության խթանում	• Կազմակերպվել են հանդիպումներ շահագրգիռ կողմերի հետ՝ ներկայացնելու առաջարկությունները • Կազմակերպվել են հանդիպումներ Արդյունահանվող արտադրությունների թափանցիկության նախաձեռնությամբ շահագրգիռ միջազգային կազմակերպությունների և համապատասխան պետական կառույցների ներկայացուցիչների հետ			

ՌԽ 3.1 .2. Բարելավվել են քաղաքային ռեսուրսների կառավարման գործընթացները	Ցուցանիշներ	2013	2014	2015
Կանաչ տարածքների կառավարումը կարգավորող օրենսդրության և պրակտիկայի ուսումնասիրություն և դրանց բարելավմանն ուղղված առաջարկությունների մշակում և ջատագովություն	• Իրականացվել է Երևանի կանաչ տարածքների վարձակալության/սեփականաշնորհման գործընթացների մոնիտորինգ և համապատասխան թարմացումներ են իրականացվել տվյալների շտեմարանում • Ուսումնասիրվել է բնակավայրերի կանաչ տարածքների կառավարումը կարգավորող օրենսդրությունը և կազմվել է առաջարկությունների փաթեթ • Կազմակերպվել է շահագրգիռ կողմերի քննարկում՝ ներկայացնելու ուսումնասիրության արդյունքներն ու համապատասխան առաջարկությունները			
ՌԽ 3.1.3 Բարելավվել են պատմամշակութային հուշարձաններ կառավարման գործընթացները	**Ցուցանիշներ**	**2013**	**2014**	**2015**
Պատմության և մշակույթի հուշարձանների կառավարումը կարգավորող օրենսդրության և պրակտիկայի ուսումնասիրություն և դրանց բարելավմանն ուղղված առաջարկությունների մշակում և ջատագովություն	• Իրականացվել է Երևանի պատմաճարտարապետական հուշարձանների կառավարման և օգտագործման նկատմամբ մոնիտորինգ և համապատասխան թարմացումներ են իրականացվել տվյալների շտեմարանում • Կազմակերպությունը մասնակցել է գործընկերների կողմից իրականացվող ուսումնասիրություններին և ներկայացրել առաջարկություններ			
ՌԽ 3.1.4. Բարելավվել է հանրային ֆինանսների կառավարումը (ներառյալ՝ գնումները)	**Ցուցանիշներ**	**2013**	**2014**	**2015**
Հանրային գնումների ոլորտը կարգավորող օրենսդրության և պրակտիկայի ուսումնասիրություն և դրանց բարելավմանն ուղղված առաջարկությունների մշակում և ջատագովություն	• Իրականացվել է հանրային գնումների մոնիտորինգ • Ուսումնասիրվել է հանրային գնումները կարգավորող օրենսդրությունը և կազմվել է առաջարկությունների փաթեթ • Կազմակերպվել է հինգ միջոցառում՝ ներկայացնելու ուսումնասիրության արդյունքներն ու համապատասխան առաջարկությունները			
Պետական և/կամ համայնքային բյուջեների վերահսկողության կազմակերպում	• Իրականացվել է բյուջետային ծախսերի մոնիտորինգ առնվազն 2 ոլորտներում • Կազմակերպվել է երկու միջոցառում՝ ներկայացնելու ուսումնասիրության արդյունքներն ու համապատասխան առաջարկությունները			

ՌԽ 3.1.5. Բարելավվել է պաշտպանության և անվտանգության ոլորտների կառավարումը	Ցուցանիշներ	2013	2014	2015
Համապատասխան ոլորտները կարգավորող օրենսդրության և պրակտիկայի ուսումնասիրություն և դրանց բարելավմանն ուղղված առաջարկությունների մշակում և ջատագովություն	• Ուսումնասիրվել է համապատասխան ոլորտների կառավարումը կարգավորող օրենսդրությունը և կազմվել է առաջարկությունների փաթեթ • Կազմակերպվել է շահագրգիռ կողմերի քննարկում՝ ներկայացնելու ուսումնասիրության արդյունքներն ու համապատասխան առաջարկությունները			

ՌՆ 3. 2. Բարելավվել են հասարակության մասնակցությունը բնական և քաղաքային ռեսուրսների կառավարման գործընթացում				
ՌԽ 3.2.1. Բարելավվել է հասարակության մասնակցությանն առնչվող օրենսդրությունը և դրա կիրարկումը	**Ցուցանիշներ**	**2013**	**2014**	**2015**
Օրենսդրության և իրավակիրառ պրակտիկայի բարելավմանն ուղղված առաջարկությունների մշակում և դրանց ջատագովություն	• Մասնակցություն է բերվել Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատմանն ու բնապահպանական փորձաքննությանն առնչվող օրենսդրության մշակմանը • Ուսումնասիրվել է Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատմանն ու բնապահպանական փորձաքննությանն առնչվող օրենսդրության կիրարկումը • Կազմվել է հաշվետվություն օրենսդրության կիրարկման վերաբերյալ և ներկայացվել շահագրգիռ կողմերին			
ՌԽ 3.2.2. Բարելավվել է Օրհուսի կոնվենցիայի իրականացումը	**Ցուցանիշներ**	**2013**	**2014**	**2015**
Օրհուսի կոնվենցիայով ստանձնած պարտավորությունների իրականացման ջատագովություն	• Մասնակցություն է բերվել Օրհուսի կոնվենցիայի իրականացման ազգային զեկույցի մշակմանը 2013 թվականին • Ներկայացվել են հաղորդումներ և զեկույցներ Օրհուսի կոնվենցիայի համապատասխանության կոմիտեին՝ առնվազն 2 անգամ			

ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԻՐԱԳՈՐԾՈՒՄ

Կազմակերպության 2013-2015 թթ. ռազմավարական պլանը կյանքի կոչելու համար անհրաժեշտ է մշակել ռազմավարության իրականացման ամենամյա գործողությունների պլաններ, որոնք կմանրամասնեն կոնկրետ քայլերը, ժամանակացույցը, միջոցները և պատասխանատու անձանց:

Սույն ռազմավարությամբ սահմանված նպատակների արդյունավետ իրագործման համար անհրաժեշտ է մոբիլիզացնել Կազմակերպության կառավարման բոլոր օղակները և միջոցները, ինչպես նաև ներգրավել նոր մարդկային ռեսուրսներ:

Ռազմավարության իրականացմանը զուգահեռ անհրաժեշտ է ապահովել Կազմակերպության զարգացման ծրագրի կատարումը, որն իր մեջ կներառի հետևյալ միջոցառումները՝

- Կազմակերպության անդամների ներգրավվածության աճ ԹԻՀԿ-ի գործունեության մեջ.
- Կազմակերպության գործունեության պարբերական մոնիտորինգի և գնահատման իրականացում.
- Մարդկային ռեսուրսների կառավարման համակարգի օպտիմալացում.
- Կազմակերպության գործունեության մեջ նոր մարդկային ռեսուրսների ներգրավում և/կամ վերապատրաստում.
- Կազմակերպության աշխատակիցների, անդամների, համակիրների գիտելիքների ընդլայնում կոռուպցիայի վերաբերյալ.
- Կազմակերպության գործունեության արդյունավետ մարքեթինգի իրականացում, մասնավորապես, նորագույն տեխնոլոգիաների միջոցով.
- Կազմակերպության ֆինանսական կայունության ապահովում.
- Կազմակերպության կանոնակարգերի կատարելագործում:

2013-2015 թթ. ռազմավարական պլանի իրականացումն ապահովող և/կամ դրան աջակցող մարմիններն են.

Ընդհանուր ժողովը

Ընդհանուր ժողովը հաստատում է ինչպես սույն ռազմավարությունը, այնպես էլ ռազմավարական նպատակների իրականացմանն ուղղված գործունեության վերաբերյալ Գործադիր տնօրենի հաշվետվությունները:

Խորհուրդ

Կազմակերպության խորհուրդն իրականացնում է Ռազմավարության մշակումը և ներկայացնում է այն Ընդհանուր Ժողովի հաստատմանը, ինչպես նաև ի գիտություն է ընդունում ռազմավարության իրականացմանն ուղղված տարեկան գործողությունների պլանները և հաստատում դրանց կատարման հաշվետվությունները:

Գործադիր տնօրենը

Կազմակերպության գործադիր տնօրենն ապահովում է ռազմավարական նպատակների իրագործմանն ուղղված գործողությունների պլանի կատարումը և ներկայացնում դրա իրագործման վերաբերյալ հաշվետվություն խորհրդին, ինպես նաև ռազմավարական նպատակների իրականացմանն ուղղված գործունեության վերաբերյալ հաշվետվություններ Ընդհանուր Ժողովին:

Աշխատողներ

Կազմակերպության աշխատողները իրականացնում են ռազմավարական նպատակների իրագործմանն ուղղված, տարեկան աշխատանքային պլաններով սահմանված գործողությունները և դրանց ընթացքի վերաբերյալ պարբերաբար հաշվետվություն ներկայացնում գործադիր տնօրենին:

ԹԻ քարտուղարություն

ԹԻ միջազգային հակակոռուպցիոն շարժման քարտուղարությունն իրականացնում է պարբերական վերահավատագրման գործընթաց /3 տարին մեկ/, վերլուծում և գնահատում է կազմակերպության ընդհանուր գործունեությունը, զարգացումը, արդյունավետությունը և համապատասխանությունը համապատասխան չափանիշներին: